ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք. Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» օգոստոսի 2020 թվականի N 12

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի գ) կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, և հիմք ընդունելով Լուսինե Ալեքսանյանի դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լուսինե Ալեքսանյանին օգոստոսի 17-ից հատկացնել 2020 թվականի հերթական արձակուրդը՝ 20 աշխատանքային և 4 լրացուցիչ օր տևողությամբ:
2. Պարտականությունները դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սիմա Հակոբյանի վրա:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՄ՝ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
2020 թվական, օգոստոսի 12
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2020 թվականի N 38

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0043-0017 ծածկագրով բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տիգրան Անդրեասյան փողոցի թիվ 44:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Հ ԹՈՎՄԱՍՅԱՆ

2020 թվական, օգոստոսի
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2020 թվականի N 37

ՎԼԱԴԻՄԻՐ ԷԴՈՒԱՐԴԻ ԱԿՈՊՈՎԻՆ, ՍԵՐԳԵՅ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ, ԱՇՈՏ ՄԱՐԱՏԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001թ.-ի օգոստոսի 13-ի թիվ 5 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 17.08.2020թ. N 107 եզրակացությամբ, և հաշվի առնելով քաղաքացիներ Վլադիմիր Էդուարդի Ակոպովի, Սերգեյ Սուրենի Բաբայանի, Աշոտ Մարատի Մնացականյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Վլադիմիր Էդուարդի Ակոպովին, Սերգեյ Սուրենի Բաբայանին, Աշոտ Մարատի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0101-0078 կադաստրային ծածկագրով 0,7488հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասից՝ խաղողի այգուց, 0.25 հա՝ համաձայն իրավիճակային հատակագծի , փոխադրել բնակավայրերի հողեր՝ նպատակային նշանակության, հասարարական կառուցապատման հողեր՝ գործառնական նշանակության:

2. Փոփոխված հողի կադաստրային արժեքների տարբերությունը 1 քմ-ի համար 2656 դրամ է , 0.25 հա-ի համար կազմում է 6640000 (վեց միլիոն վեց հարյուր քառասուն հազար) դրամ, որը 3-ամսյա ժամկետում պետք է վճարել համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900325176130 հաշվեհամարին:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանումների կողմից:

4. Հողամասին տալ՝ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լուի Դարթիժ դյու Ֆուրնե փողոց թիվ 11/11 հասցեն:

5. Հետագա կառուցապատում իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա , Մուսալեռ համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Հողամասը երեք տարվա ընթացքում չկառուցապատելու դեպքում սույն որոշումը համարել անվավեր:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Հ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

2020 թվական, օգոստոսի 26

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» օգոստոսի 2020 թվականի N 36

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով ՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար նշանակել և անցկացնել մրցույթներ՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ին:
2. Աշխատակազմի քարտուղարի ժ/պ-ին /Լուսինե Ալեքսանյան/ սահմանված կարգով նախապատրաստել համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության տեքստը:
3. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների աշխատանքների կազմակերպման համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լուսինե Ալեքսանյանին :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
2020 թվական, օգոստոսի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11» օգոստոս 2020 թվականի N 35

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետի 22.07.2005թ. թիվ 7 որոշումը, Արթուր Օհանյանին «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 2019 թվականի փետրվարի քսանին տրված ըստ օրենքի ժառանգության 1477-ով սեղանամատյանում գրանցված /ժառանգական գործի համարը՝ 54/2019/ վկայագիրը, որով հանգուցյալ Հարություն Օհանյանի մահից հետո ժառանգ է ճանաչվել Արթուր Հարությունի Օհանյանը՝ որոշում եմ.

1. Հանգուցյալ Հարություն Օհանյանի հետ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 3.03 հա գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալված հողամասի վարձակալության հանձնելու մասին՝ Վաղարշապատ տարածքի նոտարական գրասենյակի կողմից 12.10.2005թ. սեղ. 4570 հաստատված պայմանագրում կատարել փոփոխություն՝ որպես վարձակալ ճանաչել Արթուր Հարությունի Օհանյանին:
2. Սույն որոշումը ներկայացնել նոտարական գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » օգոստոսի 2020 թվականի N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N26 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետով որոշում եմ.

1. Ուժ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի՝ «Հողամասի վարձակալության պայմանագիրը վերաձևակերպելու մասին» N26 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ժ/պ Հ. Թովմասյան
2020 թվական, օգոստոս
գ. Մուսալեռ